ՀԱՅԵՐԵՆ

Չեմ ճանաչում ինքս ինձ

Երաժշտություն՝ Լևոն Արևշատյան · Խոսք՝ Եղիշե Չարենց

Չեմ ճանաչում ինքս ինձ, Չգիտեմ ես էլ,
Թե ո՞վ խլեց ինձանից ,Մի ոսկի տեսիլ:
Փողոցներում - հեռավոր ,Ու անմարդ, ու մութ,
Ես տեսնում եմ դեմքս նոր՝ անորոշ ու սուտ:

Ես տեսնում եմ՝ մշուշում մեկը, մոլորված,
Դեգերում է ու հիշում դարպասները բաց...
Դարպասները, որ երեկ փակվեցին մթում,
Որ շրջիկը, հուսաբեկ, չդառնա էլ տուն...

Դաշտեր ու դաշտեր: Ու արևը - վառ:
Եվ կյանքը - անտես: Զգում եմ, որ ես
Դուրս կգամ հիմա, կընկնեմ ճանապարհ:
Մի՞թե չգիտես, Մի՞թե չգիտես

Կգնամ մենակ: Կյանքում, աշխարհում:
Եվ մի իրիկուն կմթնի ուղին:
Ու կվերջանա երկրային հեռուն -
Ճանապարհը հին:

Դուրսը, հեռվում - դաշտեր ու դաշտեր:
Երկինքը - կապույտ, արևոտ, անհուն:
Ամպի պես կախված օրորվում է դեռ
Կյանքը աշխարհում:

ENGLISH

I Don’t Recognize Myself

Music: Levon Arevshatyan · Words: Yeghishe Charents

I no longer know my face. Nor can I say
who stole my golden vision away.
In distant streets, deserted and unlit,
I see my face made new: a blur, a counterfeit.

I see someone lost in the mist,
wandering, remembering the open gates…
The gates that closed last night as darkness fell
to keep the heartsick wanderer from coming home.

Fields upon fields. The sun is bright.
And life is out of sight. I feel it now:
I’ll step outside and take the road.
Don’t you know? Don’t you know?

I’ll go alone through life, through this wide world.
One evening darkness will come down,
and all the miles of earth will end there too,
where the old road ends.

Outside, far off: fields upon fields.
The sky is blue and bright and knows no bounds.
And like a cloud that hangs and gently sways,
life lingers in the world.

РУССКИЙ

I Don’t Recognize Myself

Музыка: Левон Аревшатян · Слова: Егише Чаренц

Я сам себя не узнаю. Не знаю я,
кто отнял золотое виденье у меня.
На дальних улицах, безлюдных и ночных,
я вижу новый лик — и зыбкий, и чужой.

Я вижу: кто-то заблудился в мгле,
бредёт и помнит настежь распахнутые ворота…
Вчера их затворили в темноте,
чтоб страннику, утратившему надежду, не вернуться домой.

Поля, поля. И солнце ярко светит.
А жизни не видать. Я чувствую: сейчас
я выйду за порог и в путь пущусь.
Неужто ты не знаешь? Неужто ты не знаешь?

Один пойду по жизни, по земле.
Однажды к вечеру мой путь оденет мгла.
И там придёт конец земной дали —
моей дороге давней.

А там, вдали, — поля, опять поля.
Всё небо в солнце. Синеве нет края.
И, словно облако, повиснув, всё ещё
тихонько покачивается жизнь.